ցի մանաւանդ կնսարացի՝ յաճախած ալ են շատ կցիր[1]-դեգ, խորտուբորդ բնաւորութիւններ, վայրահայեաց

(1) Այսպիսի կցիր կծծիներու նկարագիրը գեղեցիկ ճշդութեամբ կըստորագծէ ծերունի յոյն փիլիսոփան Թէոփրաստոս.—

«Եւ կծծի է, որ և յետ ամսոյ չդանդաղեալ ելեալ գնայ 'ի տուն պարտապանին պահանջել զ'ւէս դանկ իւր: Ի միաժողով ճաշկերոյթս տոհմայնոց՝ թուէ զբաժակս իւրաքանչիւր զոր ըմպեն..., Որչափ և դիւրագին ինչ որ հաշուիցի գնեալ, նա տակաւին շատ է, ասէ, շատ: Եթէ ծառայն պոյտն ինչ կամ պուտնարդ բեկանիցէ, 'ի ռոճկէն նորա տուժէ: Եթէ յանկարծ բնիոն մի անկեալ ի կնոջէն կորնչիցի, վեր ի վայր հարկեալ վրդովէ զամենայն կահս տանն և զմահիճս և զարկեղս, և ընդ ամենայն խորշս և ծածուկս խիլ արկեալ որոնէ: Իբրև վաճառիցէ ինչ, այնքանոյ տայ՝ զի մի՛ ինչ շահեսցի գնողն:

Զտայ թոյլ և ոչ թուզ մի ուտել ի պարտիզէ իւրմէ, ոչ ընդ ագարակ իւր անցանել և ոչ ձէթ մի կամ արմաւ ի գետին անկելոցն բառնալ: Ելանէ շրջի զօր ամենայն այգ և խնդիր առնել իւրոց սահմանացն ցանգոց՝ եթէ անխախտ'ւտ կայցեն: Ոչ ինչ խղճէ օր ի յօր առնել զհատոցումն պարտուցն, և ի վաշխիցն շարիատս պահանջէ:

Եթէ խրախունս ժողովրդականոցն առնիցէ, զխորտիկան մանր մանր կոտորեալ՛ այնպէս մատուցանէ ի սեղան: Իբրև զուտեստէ ելանիցէ, առանց ինչ ստանալոյ դառնայ ի տուն: Պատուէր տայ կնոջ իւրում մի՛ վատնել զաղ, մի՛ զպատրոյգ, մի՛ զչաման, մի՛ զզուփրակ, մի՛ զաշտիպս, մի՛ ըզթեոս և մի՛ զաթերա, զի այդ մանրունքդ, ասէ, մեծ լինին ի գլուխ տարւոյն:

Համայն ասել, որ ժլատ և ոխշղն իցեն, զնոցա և զզանձանակսն է տեսանել ճճեկերս բորբոսեալս, և զբանալիսն ժանգահարս, և զնոսա զլխովին՝ զի զգենուն ըստ կարի հանդերձս նեղս և կարճս, ի փոքրիկ և ի դոյզն սրուակէ լիուլի օծանին, գերծուն մինչև ցմորթ մարմնոյն(*), և զմիջաւուրբ բոկանան: Եւ առ թափիչսն երթեալ զուն զործեն՝ զի ձորձ իւրեանց ընդ բազում կաւ եկեսցէ, որպէսզի մի՛ ապա փութով աղտեղասցի:» Թէոփրաստոսի նկարագիրք ԺԹ. էջք 72—75:

Պղատոնի և Արիստոտէլի աւագ աշակերտին այս ոսկեղէն հատուածն՝ այնքան ճիշդ ու գեղեցիկ գրաբարի թարգմանած է այսպէս Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունի Մխիթարեանն՝ որ չենք համարձակիր թարգմանել զայն ի՛նչ և է աշխարհաբարի:

(*) Իմա, այնպէս տան գերծել՝ զի մի՛ ստէպ վարսավիրայի կարօտասցին: Եւ ի ջեռուցանել արեւու բոկանան՝ զի մի օղք ոտիցն հնասցին: